ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2295-Ա « 07 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի Հ.3321-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 16.04.2026թ. հ.20-Ել-22918 եզրակացությունը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 09.06.2025թ. հ.10729 վկայագիրը, ինչպես նաև քաղաքացի Գոհար Պանդեյանի 09.12.2025թ. հ.Դ-137146-25 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի ապրիլի 23-ի «Երևանի քաղաքապետի 2005 թվականի հուլիսի 12-ի հ.1506-Ա որոշման հ.15-րդ կետը չեղյալ ճանաչելու, Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.4 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Գոհար Սուրիկի Պանդեյանի, Ավետիք Սուրիկի Պանդեյանի, Նարինե Սուրիկի Լետցելի գույքային իրավունքները վերականգնելու, 297.12քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.3321-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 2.1 կետով, հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա Երևան քաղաքի Շահումյան 7-րդ փողոց 1-ին նրբանցք հ.4 հասցեում գտնվող 1437.12 քառ.մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման:».

2) Որոշման վերնագրից, նախաբանից, 2-րդ, 3-րդ և 9-րդ կետերից հանել «Նարինե Սուրիկի Լետցելի» բառերը.

3) Որոշման նախաբանից հանել «Նարինե Սուրիկի Լետցելի (ծնված 22.05.1958թ.)» բառերը.

4) Որոշման 4-րդ կետում՝ «քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ